ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
Վճարովի ծառայությունների մատուցման թիվ Ք-101-01/07-22

ք.Երևան **«23» հունիսի 2022թ.**

ՀՀ Կոտայքի մարզպետարանը ի դեմս մարզպետարանի գլխավոր քարտուղար Լևոն Պետրոսյանի, ով գործում է մարզպետարանի կանոնադրության համաձայն, այսուհետ՝ Պատվիրատու, հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2022 թվականի հունիսի 9-ի N835-ն որոշումը, մի կողմից, և «ՔՐԵԱԳԵՏ ԴԱՏԱԿԱՆ ԵՎ ԱՆԿԱԽ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԵՆՏՐՈՆ» ՍՊԸ-ն հետագայում՝ Կատարող, ի դեմս տնօրեն Արտաշես Հովհաննիսյանի, մյուս կողմից, ով գործում է ընկերության կանոնադրության համաձայն, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին.

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Կատարողը պարտավորվում է տրամադրել գրավոր եզրակացություն՝ Պատվիրատուի կողմից առաջադրված հետևյալ հարցերի վերաբերյալ.

Որքան է կազմում ՀՀ Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքի **Մարզ Կոտայք, համայնք Բյուրեղավան գյուղ Նուռնուս հողամաս հասցեում գտնվող** 0.16 /զրո ամբողջ տասնվեց/ հեկտար մակերեսով հողամասի շուկայական արժեքը:

1.2 Պատվիրտուն պարտավորվում է վճարել մատուցված ծառայությունների դիմաց:

2. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԱՐԺԵՔԸ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

2.1 Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման արժեքը կազմում է՝ 70.000 (յոթանասուն հազար) ՀՀ դրամ, ներառյալ հարկերը:

2.2 Ծառայությունների դիմաց վճարման ենթակա գումարը փոխանցվում է պայմանագիրը կնքելուց հետո 10 (տասը) բանկային օրվա ընթացքում:

3. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

3.1 Կատարողը պարտավորվում է՝

ա/ Աշխատանքներն իրականացնել մինչև տասը աշխատանքային օրվա ընթացքում:

բ/ Աշխատանքներն իրականացման սկիզբ է համարվում հետազոտման ենթակա օբյեկտների և անհրաժեշտ ելակետային տվյալների տրամադրման օրը:

3.2 Պատվիրատուն պարտավորվում է՝

ա/ Համապատասխան պայմաններ ստեղծել աշխատանքներն անցկացնելու համար և այդ նպատակով Կատարողին տրամադրել ելակետային տվյալներ, տեղեկատվություն /բանավոր կամ գրավոր/ և անհրաժեշտ փաստաթղթեր:

բ/ Պայմանագրով նախանշված ժամկետում կատարել սույն պայմանագրի 2.1 կետով սահմանված վճարումը:

4. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՎԵՃԵՐԻ ԼՈՒԾՄԱՆ ԿԱՐԳԸ

4.1 Վեճեր առաջանալու դեպքում հարցը լուծվում է բանակցությունների կամ ՀՀ գործող օրենսդրությամբ սահմանված կարգով:

4.2 Սույն պայմանագրով նախատեսված պարտականությունները ժամանակին չկատարելու կամ մասամբ կատարելու դեպքում կողմերը կրում են նաև պատասխանատվություն ՀՀ գործող օրենսդրությամբ և չեն ազատվում իրենց վրա դրված պարտականությունները ամբողջությամբ կատարելուց:

5. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԱՂՏՆԻՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կողմերը պարտավոր են պահպանել սույն պայմանագրով նախատեսված աշխատանքների գաղտնիության սկզբունքը:

5.2 Կատարողը և Պատվիրատուն պատասխանատվություն չեն կրում պետական մարմինների կողմից եզրակացության պահանջի դեպքում, եթե վերջիններս համաձայն գործող օրենսդրության ունեն դրա իրավունքը:

6. ԼՐԱՑՈՒՑԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ

6.1 Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի կողմից ստորագրելու պահից:

6.2 Սույն պայմանագրի բոլոր լրացումները և փոփոխությունները իրավաբանական ուժ կունենան միայն գրավոր ձևակերպվելու և երկկողմանի հաստատվելու դեպքում:

6.3 Սույն պայմանագիրը կարող է լուծվել՝

6.3.1 Կողմերի փոխադարձ համաձայնությամբ:

6.3.2 Կողմերից մեկի պայմանագրային պարտավորությունները չկատարելու դեպքում:

6.4 Կողմերն ազատվում են պատասխանատվությունից՝ պարտավորությունների մասնակի կամ լրիվ չկատարելու դեպքում, եթե այդպիսիք կապված են եղել գործող օրենսդրությամբ որոշվող անհաղթահարելի ուժի հետ:

6.5 Սույն պայմանագիրը կազմված է հայերեն լեզվով երկու իրավահավասար օրինակից, յուրաքանչյուր կողմին մեկական օրինակ:

7. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ ԵՎ ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ՝	ԿԱՏԱՐՈՂ՝
ՀՀ Կոտայքի մարզպետարան	«ՔՐԵԱԳԵՏ» ԴԱՏԱԿԱՆ ԵՎ ԱՆԿԱԽ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԵՆՏՐՈՆ ՍՊԸ
Հասցե՝ ք. Հրազդան, Կենտրոն, Սահմանադրության հրապարակ, 1 շենք	ՀՀ, ք.Երևան, Արշակունյաց 5 սենյակ 328
	«Կոնվերսբանկ» ՓԲԸ
մարզպետարանի գլխավոր քարտուղար	h/h 19300529878401 00
Լևոն Պետրոսյան	ՀՎՀՀ 02632817
_____	Տնօրեն _____ Ա. Հովհաննիսյան